

Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի մայիսի 23-ի 95/12/ԵՀ հրահանգը կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման մասին

Պաշտոնական տեղեկագիր, L 136 , 21.06.1995թ., էջ 0001 - 0027

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Կենցաղային տեխնիկայի կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը, մասնավորապես դրա 9 և 12-րդ հոդվածները,

քանի որ 92/75/ԵՏՀ հրահանգի համաձայն, Հանձնաժողովը պետք է կիրարկող հրահանգներ ընդունի կենցաղային տեխնիկայի վերաբերյալ, ներառյալ լվացքի մեքենաները,

քանի որ լվացքի մեքենաների կողմից էլեկտրականության օգտագործումը կազմում է Համայնքի ամբողջ էլեկտրականության պահանջարկի նշանակալից մասը, և քանի որ դրանց կողմից սպառվող էներգիայի ծավալները կարող են էապես կրճատվել,

քանի որ լվացքի որակի բարձրացման համար հաճախ պահանջվում է ավելի շատ ջուր ու հոսանք օգտագործել, և քանի որ լվացքի որակի մասին տվյալները կարող են օգտակար լինել մեքենայի էներգասպառման ու ջրի սպառման տվյալները գնահատելու համար, և դա կարող է օգնել սպառողներին ընտրություն կատարել ի օգուտ էներգիա խնայող մեքենաների,

քանի որ Համայնքը, հաստատելով իր հետաքրքրությունը միջազգային ստանդարտացման համակարգի նկատմամբ, որն ընդունակ է ստանդարտներ մշակել, որոնք փաստացի օգտագործվում են միջազգային առևտրի բոլոր գործընկերների կողմից և բավարարում են Համայնքի պահանջները, հորդորում է Եվրոպական ստանդարտացման կազմակերպություններին շարունակել իրենց համագործակցությունը միջազգային ստանդարտացման կազմակերպությունների հետ,

քանի որ Ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵՆ) և Էլեկտրատեխնիկական ստանդարտացման եվրոպական կոմիտեն (ՍԵՆԷԼԵԿ) մարմիններ են, որոնք իրավասու են ներդաշնակեցված ստանդարտներ ընդունել Հանձնաժողովի և այս երկու մարմինների միջև 1984 թվականի նոյեմբերի 13-ին ստորագրված համագործակցության ընդհանուր ուղեցույցի համաձայն, քանի որ սույն Հրահանգի համաձայն ներդաշնակեցված ստանդարտը տեխնիկական մասնագիր է (Եվրոպական ստանդարտների կամ ներդաշնակեցման փաստաթուղթ), որն ընդունված է ՍԵՆԷԼԵԿի կողմից, Հանձնաժողովի պարտականությունների շրջանակների (մանդատի) հիման վրա՝ համաձայն Խորհրդի 1983 թվականի մարտի 28-ի 83/189/ԵՏՀ հրահանգի, որը սահմանում է վերջին անգամ Հանձնաժողովի 94/10/ԵՀ (3) որոշմամբ փոփոխված և ընդհանուր ուղեցույցի հիման վրա գործող տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի (2) վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգը,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը:

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգը տարածվում է էլեկտրական ցանցից սնվող կենցաղային լվացքի մեքենաների վրա, բացառությամբ.

- մեքենաների, որոնք չունեն պտտվող խցիկ,
- մեքենաների, որոնց լվացման ու ցնեստրիֆուզացման խցիկները առանձին են (օր.՝ կիսաավտոմատները), և
- համակցված լվացող-չորացնող մեքենաների:

Էներգիայի այլ աղբյուրներից սնվելու հնարավորություն ունեցող մեքենաները նույնպես բացառվում են:

2. Սույն Հրահանգով պահանջվող տեղեկությունը տրամադրվում է ներդաշնակեցված չափորոշիչների համաձայն, որոնց գրանցման համարները հրապարակվել են Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում և որոնց համար անդամ պետությունները

հրապարակել են ազգային չափորոշիչների գրանցման համարները՝ փոխակերպելով ներդաշնակեցված չափորոշիչները:

3. Սույն Հրահանգի շրջանակներում գործում է Խորհրդի թիվ 86/594/ԵՏՀ (1) հրահանգի 3-րդ հոդվածով սահմանված՝ աղմուկի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պահանջը: Այդ տվյալները, ըստ անհրաժեշտության, պետք է որոշվեն թիվ 83/189/ԵՏՀ հրահանգի համաձայն:

4. «Գործակալ», «մատակարար», «տեղեկատվական թերթիկ», «այլ էական ռեսուրսներ» և «օժանդակ տեղեկություններ» հասկացությունները պետք է ունենան 92/75/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածով սահմանված իմաստները:

Հոդված 2

1. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(3) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝

- մատակարարի անվանումը և հասցեն,
- սարքի ընդհանուր նկարագրություն, որը բավարար է այն տարբերակելու համար,
- տեղեկատվական նյութեր, այդ թվում՝ սխեմաներ, մոդելի նախագծման հիմնական հատկանիշների և մասնավորապես այն հատվածների, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն էներգասպառման վրա,
- համապատասխան չափման փորձաստուգման հաշվետվությունները, որոնք իրականացվել են 1(2) հոդվածում նշված ներդաշնակեցված չափորոշիչների փորձաստուգման ընթացակարգերի համաձայն,
- շահագործման ցուցումներ, եթե այդպիսիք կան:

2. 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված պիտակը պետք է համապատասխանի սույն Հրահանգի I հավելվածում նշված նկարագրությանը: Պիտակը պետք է փակցվի դրսից, սարքի վերևի կամ դիմային մասում, այնպես, որ հստակորեն երևա ու ոչ մի բանով չծածկվի:

3. Թիվ 92/75/ԵՏՀ հրահանգի 2(1) հոդվածում նշված տեղեկաթերթիկը, իր բովանդակությամբ ու ձևաչափով, պետք է համապատասխանի սույն Հրահանգի II հավելվածում նշված նկարագրությանը:

4. 92/75/ԵՀՏ հրահանգի 5-րդ հոդվածում նշված հանգամանքների դեպքում և երբ վաճառքի, վարձակալության կամ տարաժամկետ վաճառքի մասին առաջարկը նշվում է տպագիր կերպով, օրինակ կատալոգում, այդ տպագիր նյութը պետք է պարունակի սույն Հրահանգի III հավելվածում նշված ամբողջ տեղեկատվությունը:

5. Սարքի էներգախնայողության դասը, դրա վանալու արդյունավետության դասը, ինչպես նաև՝ չորացնելու արդյունավետության դասը, որոնք նշվում են պիտակի և տեղեկաթերթիկի վրա, պետք է համապատասխանեն 4-րդ հավելվածին:

Հոդված 3

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որ իրենց տարածքում գործող բոլոր մատակարարներն ու միջնորդներն իրականացնեն սույն Հրահանգով սահմանված իրենց պարտականությունները:

Հոդված 4

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն և հրապարակեն սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 1996 թվականի մարտի 1-ը: Նրանք պետք է այդ մասին անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին: Նրանք պետք է կիրառեն այդ դրույթները 1996 թվականի ապրիլի 1-ից:

Այդուհանդերձ, անդամ պետությունները պետք է թույլ տան մինչև 1996 թվականի սեպտեմբերի 30-ը՝

- արտադրանքի գովազդը, շուկայահանումը և/կամ ցուցադրումը,
- սույն Հրահանգին չհամապատասխանող և 2(4) հոդվածում նշված տպագիր տեղեկությունների տարածումը:

Անդամ պետությունները, սույն ակտերն ընդունելիս, պետք է ապահովեն, որ դրանք հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 5

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց 20 օր հետո:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1995 թվականի մայիսի 23-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Քրիստոս ՊԱՊՈՒՏՍՒՍ

Հանձնաժողովի անդամ

(1) ՊՏ, թիվ L 297, 13.10.1992թ., էջ 16:

(2) ՊՏ, թիվ L 109, 26. 4. 1983թ., էջ 8,

(3) ՊՏ, թիվ L 100, 19. 4. 1994թ., էջ 30:

(1) ՊՏ, թիվ L 334, 6.12.1986թ., էջ 24:

ՊԻՏԱԿԸ

Պիտակի նախագիծը

1. Պիտակը պետք է գրվի համապատասխան լեզվով և ունենա հետևյալ օրինակելի ձևերից մեկը.

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

Պիտակին վերաբերող ծանոթագրություններ

2. Հետևյալ ծանոթագրություններով սահմանվում են պիտակի մեջ ընդգրկվելու ենթակա տեղեկությունները:

Ծանոթագրություն

I. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը

II. Մատակարարի մոդելի անվանումը կամ համարը

III. Սարքի էներգախնայողության դասը պետք է որոշվի IV հավելվածի համաձայն: Այս տառը պետք է տեղադրվի համապատասխան սլաքի հետ նույն մակարդակի վրա:

IV. Եթե սարքը Խորհրդի (ԵՏՀ) թիվ 880/92(1) կանոնակարգի համաձայն ստացել է «Համայնքի էկոպիտակ», այդ պիտակի պատճենը կարող է ընդգրկվել այստեղ՝ առանց խախտելու Համայնքում գործող էկոպիտակավորման կարգը: Ստորև նշված «Լվացքի մեքենաների պիտակների նախագծման ուղեցույցում» բացատրվում է, թե ինչպես կարելի է պիտակի մեջ ընդգրկել էկոպիտակի նշանը:

V. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված էներգիայի սպառումը Կվտժ-ով՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

VI. Լվանալու արդյունավետության դասը՝ որոշված 4-րդ հավելվածի համաձայն:

VII. Չորացնելու արդյունավետության դասը՝ որոշված 4-րդ հավելվածի համաձայն:

VIII. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված պտտման առավելագույն արագությունը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

IX Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված լվացման խցի տարողությունը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

X. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված ջրի սպառումը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

XI. Ջրի 60 °C ջերմաստիճանի պայմաններում լվացման և պտտման ցիկլերի ժամանակ արտադրվող աղմուկը, համաձայն Խորհրդի (ԵՏՀ) թիվ 86/594(2) հրահանգի (ըստ նպատակահարմարության):

Ծանոթագրություն

Վերը նշվածին համարժեք պայմանները այլ լեզուներով ներկայացված են V հավելվածում:

Տպագրություն

3. Հետևյալ նկարագրությունը սահմանում է պիտակի որոշ առանձնահատկություններ՝

ՀՂՈՒՄ ԺԱՊԱՎԵՆԻՆ

Օգտագործվող գույները.

CMYK– երկնագույն, ծիրանեգույն, դեղին, սև:

Օրինակ՝ 07X0: Օր.՝ 0 % երկնագույն, 70 % ծիրանեգույն, 100 % դեղին, 0 % սև:

Սլաքներ.

- A: X0X0

- B: 70X0

- C: 30X0

- D: 00X0

- E: 03X0

- F: 07X0

- G: 0XX0

Ուրվագծման գույնը՝ X070

Ողջ տեքստը սև է: Ֆոնը սպիտակ է:

Տպագրման մասին բոլոր տեղեկությունները ներկայացված են «Լվացքի մեքենաների պիտակների նախագծման ուղեցույցում», որն ունի զուտ տեղեկատվական բնույթ:

Էներգապիտակավորման և կենցաղային սարքերի մասին ստանդարտ տեղեկությունների հարցերով հանձնաժողովի քարտուղար՝

Էներգիայի հարցերով գլխավոր տնօրինություն XVII,

Եվրոպական հանձնաժողով

Rue de la Loi/Wetstraat 200

Բրյուսել B-1049:

(1) ՊՏ, թիվ L 99, 11.4.1992թ., էջ 1:

(2) ՊՏ, թիվ L 344, 6. 12. 1986թ., էջ 24,

Համապատասխան ստանդարտներն են՝ EN 60704-2-4 (աղմուկի չափում) և EN 60704-3 (ստուգում):

Տեղեկաթերթիկը

Նկարագրում նշվում են հետևյալ տեղեկությունները: Տեղեկությունները կարող են ներկայացվել մատակարարի կողմից առաջարկվող բոլոր մոդելները նկարագրող ունիվերսալ աղյուսակի տեսքով, որի դեպքում տվյալները պետք է ներկայացվեն հետևյալ հերթականությամբ կամ սարքի նկարագրին կից:

1. Մատակարարի ապրանքային նշանը,

2. Մատակարարի մոդելի անվանումը կամ համարը,

3. Մոդելի էներգախնայողության դասը, որը սահմանված է IV հավելվածի համաձայն: Արտահայտված է «էներգախնայողության դաս ... A-ից (առավել արդյունավետ) մինչև G (առավել անարդյունավետ)»: Երբ այս տեղեկատվությունը տրամադրվում է աղյուսակում, այն կարող է ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ պարզ է, որ սանդղակը A-ից (առավել արդյունավետ) G-ն (առավել անարդյունավետ) է:

4. Եթե այդ տեղեկությունները ներկայացվում են աղյուսակով, և եթե թիվ 880/92 Կանոնակարգի համաձայն աղյուսակում ընդգրկված սարքերից որևէ մեկին "Համայնքի էկոպիտակ" է շնորհվել, այդ տեղեկությունները կարող են ներառվել աղյուսակում: Այս դեպքում տողի վերնագրում գրվում է «Համայնքի էկո-պիտակ», իսկ տողում արտատպվում է էկոպիտակի նշագրման պատճենը: Այս դրույթը չի հակասում Համայնքում գործող էկոպիտակավորման կարգին:

5. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված էներգիայի սպառումը ԿՎտժ-ով՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ, պետք է ներկայացվի հետևյալ ձևով՝ «էներգիայի սպառումը XYZ ԿՎտժ՝ հաշվարկված ստանդարտ թեստավորման կարգով, 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ցիկլի համար»: Փաստացի էներգասպառումը կախված կլինի նրանից, թե ինչպես է օգտագործվում սարքը:

6. Լվանալու արդյունավետության դասը՝ որոշված 4-րդ հավելվածի համաձայն: Արտահայտված է «Լվանալու արդյունավետության դաս ... A-ից (առավել արդյունավետ) մինչև G (առավել անարդյունավետ)»: Դա կարող է ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ պարզ լինի, որ սանդղակը A-ից (առավել արդյունավետ) G-ն (պակաս արդյունավետ) է:

7. Ցենտրիֆուգացմամբ չորացնելու արդյունավետության դասը (IV հավելված): Արտահայտված է որպես՝ Արտահայտված է «Չորացնելու արդյունավետության դաս ... A-ից (առավել արդյունավետ) մինչև G (առավել անարդյունավետ)»: Որին հաջորդում է հետևյալ ծանոթագրությունը.

«Ցենտրիֆուգացմամբ չորացնող մեքենաների համար: Ընտրելով «A» դասի չորացնելու արդյունավետությամբ մեքենա «G» դասի փոխարեն, դուք կիսով չափ կպակասեցնեք չորացման հետ կապված ձեր ծախսը: Շորերը ցենտրիֆուգացմամբ չորացնելու համար սովորաբար պահանջվում է ավելի շատ էներգիա, քան դրանք լվանալու համար:»

Այս ծանոթագրությունը կարող է գրվել նաև տեքստի ներքևում:

Երբ այս տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակում, այն կարող է արտահայտվել նաև այլ կերպ, եթե աղյուսակից երևում է, որ սանդղակը «A»-ից (բարձր) «G» (ցածր) է, իսկ ծախսերի մասին ծանոթագրությունը գրվում է աղյուսակի կամ էջի ստորին մասում:

8. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված ջրի հեռացման արդյունավետությունը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ: Արտահայտվում է հետևյալ կերպ. «Չորացումից հետո մնացած ջուրը կազմում է % (որպես լրիվ չոր շորերի քաշի մաս)»:

9. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված պտտման առավելագույն արագությունը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

10. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտների համաձայն հաշվարկված լվացման խցի տարողությունը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

11. Հավելված 1(2)-ում նշված ներդաշնակեցված ստանդարտներով նախատեսված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված ջրի սպառումը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

12. Հավելված 1(2)-ում նշված թեստավորման կարգի համաձայն հաշվարկված ծրագրավորման ժամանակը՝ 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի մեկ ստանդարտ ցիկլի ժամանակ:

13. Մատակարարները կարող են 6-ից 12-րդ կետերում ներառված տեղեկությունները ներկայացնել լվացման այլ ցիկլերի համար:

14. Ջրի և էլեկտրաէներգիայի միջին տարեկան ծախսը՝ հաշվարկված 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի 200 ստանդարտ ցիկլերի համար: Սա կարող է արտահայտվել որպես. «չորս հոգանոց ընտանիքի տարեկան ծախսը՝ հաշվարկված 60 °C ջերմաստիճանի պայմաններում բամբակյա շորերի լվացքի 200 ստանդարտ ցիկլերի համար»:

15. Ջրի 60 °C ջերմաստիճանի պայմաններում լվացման և պտտման ցիկլերի ժամանակ արտադրվող աղմուկը, համաձայն (ԵՏՀ) թիվ 86/594 հրահանգի:

Եթե պիտակի գունավոր կամ սևուսպիտակ պատճենը ընդգրկվում է տեղեկաթերթիկի մեջ, դրանում պետք է ներկայացնել միայն հետևյալ տեղեկությունները:

Ծանոթագրություն.

Վերը նշվածին համարժեք պայմանները այլ լեզուներով ներկայացված են V հավելվածում:

ԷԼ. ՓՈՍՏՈՎ ՊԱՏՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՎԱՃԱՌՔ

Էլ. փոստով պատվերների կատալոգները կամ 2(4) հոդվածում նշված այլ տպագիր նյութերը պետք է պարունակեն ստորև ներկայացված հերթականությամբ հետևյալ տեղեկատվությունը՝

1. Էներգախնայողության դասը (II հավելված, 3-րդ կետ)
2. Էներգասպառումը (II հավելված, 5-րդ կետ)
3. Լվանալու արդյունավետության դասը (II հավելված, 6-րդ կետ)
4. Ցենտրիֆուգացմամբ չորացնելու արդյունավետության դասը (II հավելված, 7-րդ կետ)
5. Պտտման առավելագույն արագությունը (I հավելված, VIII ծանոթագրություն)
6. Տարողությունը (I հավելված, IX ծանոթագրություն)
7. Զրի սպառումը (I հավելված, X ծանոթագրություն)
8. չորս հոգանոց ընտանիքի տարեկան հաշվարկային ծախսը (II հավելված, 14-րդ կետ)
9. Աղմուկը (I հավելված, XI ծանոթագրություն):

Եթե տեղեկաթերթիկում ներկայացվում են այլ տեղեկություններ, դա պետք է արվի II հավելվածում սահմանված ձևով և վերը նշված աղյուսակում ներկայացված հաջորդականությամբ:

Ծանոթագրություն.

Վերը նշվածին համարժեք պայմանները այլ լեզուներով ներկայացված են V հավելվածում:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ

1. Սարքի էներգախնայողության դասը պետք է որոշվի հետևյալ աղյուսակի համաձայն:

ԱՂՅՈՒՍԱԿ

2. Սարքի լվանալու արդյունավետության դասը որոշվում է Աղյուսակ 2-ի համաձայն:

ԱՂՅՈՒՍԱԿ

3. Սարքի չորացնելու արդյունավետության դասը որոշվում է Աղյուսակ 3-ի համաձայն:

ԱՂՅՈՒՍԱԿ

ՀԱՎԵԼՎԱԾ V

ԱՂՅՈՒՍԱԿ